«ՏԵՂԵԿԱԳԻՐ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահությունը ջերմորեն ողջունում և շնորհավորում է «Տեղեկագրի» (հասարակական գիտություններ) խմբագրության աշխատողներին, հեղինակներին և ընթերցողներին ամսագրի լույս ընծայման 25-ամյակի առթիվ:

Անցած 25 տարում ամսագիրը կարևոր դեր է խաղացել հանրապետությունում հասարակագիտական մտքի զարգացման, հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, փիլիսոփայության, արվեստի և մյուս գիտությունների բազմաթիվ պրոբլեմային հարցերի լուսաբանման ուղղությամբ: Ամսագրի էջերում գիտականորեն ընդհանրացվել է Հայաստանում սոցիալիստական շինարարության պատմական փորձը, արտացոլվել է հանրապետության ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի առաջընթացի, կոմունիզմի կառուցման համար հայ ժողովրդի մղած պայքարը:

Ամսագիրը ավելի մեծ աննկիներ ունի մեր երկրում կոմունիզմի կառուցման համար ծավալված համաժողովրդական պայքարում: Նրա առաջնահերթ խնդիրն է՝ մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա ավելի լայնորեն լուսաբանել մեր հասարակության զարգացման օրինաչափությունները, հանրապետության տնտեսության ու կուլտուրայի առաջընթացի, գիտությունը արտադրողական ուժի վերածելու կոնկրետ ուղիները, հայագիտության կարևոր պրոբլեմները: Ամսագիրը պետք է լուրջ ուշադրություն դարձնի տպագրվող նյութերի գաղափարական և գիտական մակարդակը էլ ավելի բարձրացնելու, հեղինակային կոլեկտիվը բարձրորակ մասնագետներով համալրելու վրա:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահությունը համոզված է, որ ամսագիրը այսուհետև ևս անշեղորեն կիրագործի իր առջև դրված պատվավոր խնդիրները, արժանի ավանդ կմուծի հանրապետության հասարակագիտական մտքի հետագա զարգացման գործում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ